

նայելու է որ փսխեցուցիչ ու կուրծքը կակզբնող գեղեր տրուին :

Հացը սովորաբար կը մքլոտի երկայն ատեն պահելէն . ուստի նայելու է որ պահելու հացերը աղէկ եփած ըլլան , դրուած տեղերնին ալխոնաւ չըլլայ . վերջապէս աս բանիս վտանգները գիտնալով մեծ զգուշութիւն ընելու է պաշար պատրաստելու ատեն : Ո՞ր և իցէ եղեր ալերբոր աւրուած ու ծդրած են՝ ասանկ վտանգներ կրնան բերել մարդուս :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաղագս օգոտակարութեանց և վաստաց թագերական հանդիսից :

Այս հաստատութեամբ 'ի վերայ կալ չշմարտութեանն , յառաջ քան զամենայն արժան է 'ի միտ առնուլ եթէ թատերականս արարուած թէ . պէտ և բերկրական է մտաց մարդոյ , բայց ոչ է և ոչ պարտի համարիլ 'ի թիւս հրապարակական հանդիսից 'որոց վախճան է զբօսանք և թքնակչաց քաղաքին . որպիսի են հանդէսք խաղարկութեանց , պարուց , և որ այլն ևս : Իսկ սա առանձինն պարտի կարգիլ 'ի խրատ և յուղղութիւն ազգին և ժողովրդեան յայնմամենայնի՝ զորս 'ի վեր անդր յիշատակեցաք : Իսկ առ 'ի բաց փարատելց զամենայն երկմրտութիւն՝ ունիմք և զօրինակն յանդիման : Հարահանգք զինուորականք թուին իմն առաջի ժողովրդոց հանդէս լոկ ակնահաճոյ , վասն որոյ և 'ի մեծամեծ փորձսն խուռն ընթանան ամբոխք 'ի տես և զուարձանան : Այլ վախճան պետութեանն՝ 'ի մատուցանել անդ զզօրականսն 'ի փորձ անդր , մի արդեօք սփոփումն ժողովրդեանն

իցէ . ոչ բնաւ . այլ կրթութիւն զօրացն 'ի վարժս զինուորութեան . վասն որոյ և առ հաճել զմարդիկ ոչ երբեք զսահմանեալ կարգօքն անցանէ . թէ պէտ և ոչ արգելուցու նոցա զուարձանալ 'ի տես կեղծ մրցման զինուորացն : Հանդէս զինուորական հրահանգաց կարգեալ է 'ի մարզել զզօրականսն 'ի պատերազմ . և թատերական հանդիսիցն գործ է պատրաստել զքաղաքացիս 'ի մարտ ընդդէմ կրից և Տգիտութեան , զի կարող լինիցին պատսպարել զանձինս 'ի բռնութենէ երկուց այսոցիկ հզօր թշնամեաց մարդկութեանս . այլ եթէ 'ի կրթել անդ և զուարձացուցանիցէ , այդ ձիրք են մեծի արուեստին , որով հեշտեաւ յինքն արկանէ զմարդիկ և հրահանգէ : Իշետ այսպէս իցէ , ապա 'ի բաց 'ի թատերաց պարտ է հեռացուցանել զամենայն զպատճառս վհասուց : Իւ ոյք այնոքիկ իցեն : — Դրգիռքն անառակութե վարուց . . .

Իւ պատճառք մեծի ըարեացս այն է առաջին , զի հաստատեալ են 'ի մակ' եթէ թատերք իցեն կարգեալ 'ի զուարձութիւն և 'ի զբօսանս և եթ . և զայսր կարծեաց զվրիպակ հաւաստեցաք ցարդ : Այսկրորդ անգամ , զի հեթանոսականացն նախանձաւոր լինելով անպատկառութեանց՝ օրէն համարին մուտ տալ 'ի թատերսն և կանանց ազգի . . .

Ինչուշտ եմք մեք , զի 'ի պարկեշտասէր և 'ի զգաստ բարս մերոյ ժողովրդեան ոչ ծաւալեսցի երբեք այս թոյն մահաբեր . այլ զի թերեւս ոմանց 'ի նոցանէ անգիտութեամբ հրապուրեալ 'ի բանս և յօրինակս անպատկառից ոմանց , համարձակիցին արդեօք 'ի գովեստ առնուլ զսովորութիւն ելանելց և կանանւոյն 'ի հանդէս թատերացն , բեր տեսցուք առ վայր մի եթէ որպիսի ինչ պատճառս պատճառիցին ընդդէմ :

Այսաջին՝ զի թատերական քերթութիւնք կարգեալ են առ ուղել զկիրս . արդ ոչ ապաքէն մի է 'ի գլխաւորաց

'ի նոսա և ցանկականն . ապա արժան է , ասեն , և 'ի նորին ուղղութիւն գուն դնել : Արկրորդ՝ զի և ամենայն ազգք ծաղկեալք յիմաստութե զսոյն սովորութիւն կալեալ ունին : Արրորդ , զի՞նչ վնաս՝ եթէ երբեք թատրն եղից ի 'ի զուարձութիւն ևեթ :

(յանր է մեզ , և աւելորդ ևս՝ որպէս յուսամք , երկարաբան զայսպիսեաց լինել . սակայն արասցուք կարծ 'ի կարձոյ առ առաջինն պատասխանի : Ի կիրս մարդոյ են՝ յորոց խուսափել պարտ է զի զերծցի ոք , և են՝ որոց զհետ 'ի խնդիր պարտ է ելանել առ 'ի կրթիլ 'ի նոսին . զոր օրինակ 'ի կիրս ցասման , մինչդեռ չիցէ ոք ցասուցեալ պարտի խնդրել զապատճառն և վարժել զանձն 'ի համբերութիւն . այսպէս և 'ի կիրս նախանձուն , սապէս և յարհամարհութեանն , և այն . բայց 'ի կիրսն յայնոսիկ առ որս բնութիւնն է ինքնին հակամէտ , պարտ և արժան է բացէ 'ի բաց խուսափել 'ի պատճառացն : (օ ամուսնական սիրոյ հրապարակախօս լինել այնպէս է՝ որպէս թէ առաջի ագահին դրամն կուտեալ , տայցէ ոք և այլոց չափով , զի ագահին նկատեալ զնոցուն չափաւորութիւն մի զհետ լինիցի ժողովել անիրաւութեամք զգրամն . . .

Ի՞ւ երկրորդն՝ եթէ յարոպա ողջոյն զնոյն ունի սովորութիւն , ասեմք , զի թէ և առ մեզ մուտ գտեալ էր սովորութեանն , գրեա եթէ անհնարին էր զառաջս առնուլ և խափանել : Բայց և զայն գիտել արժան է՝ եթէ քանի գառն արտասուզ լան բարեպաշտն և ուղղատես միտք ընդ ողջոյն յարոպա զկորուստ հոգւոց յաղագս այնպիսւոյ սովորութեան :

Եւ ո՞յր ուրուք 'ի մերազնեայց չիցէ ընթերցեալ զեմբասացութիս Հովհաննու ոսկերերանի , զողքալնորա և զնկարագրել ոսկի գրչաւն զշարիսն որ 'ի թատերաց , և զսպառնալիս պատուհասից հոգւոց յաճախելոց 'ի նոսին , նա և զնասս մարմնոց , և զշարիս ընտանեաց և զաւակաց , և զքաղաքին

և զազգին զթշուառութիւնս : Եւ իցէ հնար երբեք մարդոյ՝ որոյ աչք իցեն 'ի գլուխ՝ ոչ տեսանել և ոչ 'ի միտ առնուլ զանհնարին չարիս թատերացդ այդոցիկ : Ակայն մեք մինչդեռ 'ի նախադրունա եմք տակաւին իրացն պարտիմք անշուշտ , և դիւրին է մեզ յոյժ , զշարիսն և զօգուտմն կշռեալ առաջի ունելով և զօրինակս , ոչ մուծանել 'ի մերսն զայն ազգ թատերաց 'յորոց վնասքդ յառաջ գայցեն :

Եւ առ քաջնելամութիւն իրացու և առ բարւոք ընտրութիւն՝ այսպիսի իմն կարգեսցուք բաժանումն : Արկու ազգք թատերաց են յարոպա՝ անուամք ևս զանազանեալք 'ի միմեանց մին կոչեցեալ յատր աշխարհական , և երկրորդն յատր կրթական : Ի՞ւ ռաջինքն են ամենայն հրապարական կան թատերք . և երկրորդն առանձնականք , որք գրեթէ յամենայն 'ի գլխաւոր վարժարանս և 'ի կրթարանս յարոպայ գտանին . և յայսոսիկ կրթական թատերս ոչ մտանեն երբեք կանայք , այլ միայն մանկունք , երիտասարդք՝ աշակերտք վարժարանացն . և այս թատերք կարգեալ են 'ի կրթութիւն և 'ի զուարձութիւն միանգամայն : Իակ թէ արդեօք զբօսեցուցանիցեն և այսպիսի թատերք , անտի յայտ է , զի հօծ և խուռան մարդիկ ժողովին և 'ի սոսա՝ թէպէտ և հատուցմամք դրամոց իցէ մուտն անդր : Եւ ամենայն ազգի ազգի թատերական քերթութիւնք են և յայսոսիկ 'ի կրթական թատերս . ողբերգութիք , նոխազերգութիւնք , եղերերգութիք , կատակերգութիւնք և զաւեշտք : Եւ ահա յայսոսիկ 'ի կրթական թատերս ընդ զուարձութեանն են և ամենայն ազգք օգտութեանց՝ զորս վերագոյն կարգեցաք , նա և միսիթարութիւն իմն սրտի քաղցր . զի ազգուութեամբն յորդորեն՝ պահպանեալ զմիտս սուրբս 'ի մեղմեխ և 'ի վայրաքարշ կրից՝ կամ յաստուածպաշտութիւն և կամյազգասիրութիւն , և յամենայն ազգս առաքինութեան բորբոքեն . վասն ո-

րոյ անձինք խոհականք և բարեսէրք համին յոյժ ընդ սոսա : Այս այսպէս յերեան ելանէ ձշմարտութիւնն , զի 'ի կամել մերոցն ազգասիրաց օգտել մեծապէս ազգին , և զառաջս առնուլ զվերահասնորանոր չարեաց , պարտին ընտրել առնուլ զայս ազգ թատերաց ևեթ : Այս մի ոք ասասցէ , եթէ 'ի թատերս աշխարհական կոչեցեալս միթէ և ամենայն քերթուածքն գայթակղականք իցեն՝ այսու զի կանայք անդէն երեին : — Ոչ արդարև . բայց զի 'ի լինել թոյլտուութեան՝ անհնարէ այսուհետե կալ 'ի չափու , փորձն զոյն ուսուցանէ : . . .

Իցեն արդեօք և որք պատճառս 'ի մէջ քերեն զամբարշտականն զայն առած , եթէ զեկեղեցական սկզբունս 'ի քաղաքական սկզբանց պարտ իցէ զատանել : — Այս . բայց յայնժամ ևեթ , յորժամ սահմանեսցէ Այտուած ոմանց 'ի մարդկանէ կալ մնալ յերկրի անմահական կենօք , և այլոց մահկանացուս լինել՝ որպէս եմքս , և 'ի հանդերձեալն առնուլ զհատուցումն բարեաց գործոց կամ չարաց : Օի այսպէս յերկուս բաժանին յայն ժամ մարդիկ . ոմանք զաշխարհիս ևեթ հոգալով , և այլք 'ի մահ պատրաստելով , և յաշխարհի 'ի կարեոր զգուշութեան կալով : Ապա թէ ոչ , ո՞ր այն քաղաքականութիւնն իցէ որ 'ի վտանգս անօրէնութեանց հրամայիցէ անձնամատն լինել . ձշմարիտ քաղաքականութիւն այն է՝ կարգել զօրէնս որ հսկիցեն յանվրէպ պահպանութիւնական և աստուածային օրինաց : Այս զայսպիսիս զկարգեալսն յուղութիւն բարուց՝ պարտ է յօրինացն Այտուծոյ զնոսին ուսանել . իսկ զի բազումք ոչ ունին այսպիսի ուղղութեց կամին մատուցանել , ընդ այդ ոչ ինչ է զարմանալ . զի յոլովք 'ի մարդկանէ սիրեն զվրիպականս , զի կտ գնալով տգիտութեամք յաւէտ կրից իւրեանց քան ուղիղ բանին : Ոչ ապաքէն և արդ իսկ են և յարեելս զբօսանաց վայրք և խաղարկութիւնք ,

յորս քրիստոնեայք որք զաստուած պաշտութիւն յանձն առեալք իցեն՝ և 'ի դրունս անգամ զբօսարանացն անձահից չմատչին : Հայսմամենայնէ յայտ է , եթէ քանի իրաւամբք՝ հակառակ կարծեաց ռամիկ մարդկան՝ արք իմաստութեան ձաշակառուք , որք ձանաչեն զյարգ ձշմարտութեան և զընտրութիւն քերթուածոց , զարմանան ընդ տաղտկալի հանգոյցն զոր գործէ 'ի բանահիւսութիւնս Այրոպացւոց միշտ մի և նոյն ամուսնական սէր : Այս անտի իսկ յայտ է Ձըշմարտութիւն ասացելոց , զի յանթիւրանահիւսութիւնս թատերականս ընտրելագոյնք , և յամենայն իմաստնոց աշխարհի գովեալք՝ այնոքիկ բանահիւսութիւնքն են՝ յորս ամենեին ոչ երեին տարփանք . որպէս Կոթողիայն Ուասինի , Ակեսարն Ոլթէոի , և Հոռմագում ազատեալ , և այլք : . . .

Օսակաւս յոյժ 'ի բազմաց զկարծիս իմաստնոց նշանակեցաք աստէն ' . այնչափ ևեթ՝ զի մի կարծիցի եթէ իմաստունք Այրոպիոյ ոչ իցեն 'ի միտ առեալ զվնասուցն չարիս , և ոչ ցանկանայցեն ուղղութեանն :

Այս միթէ յոլովք 'ի կրթական թատերաց չիցեն կանգնեալք՝ զի անդր ժողովեալ մարդկանն , դադարեսցին յաձախել յաշխարհական թատերս : Ի Հոռմ 'ի մատրան Փիլիպպեանց , որ է 'ի չափ ընդարձակ իմն եկեղեցւոյ , սկսեալ 'ի ծննդենէ Վրիստոսի մինչեւ զզատիկ յարութեն ուն , նաև 'ի կիւրակէս քառամորդացն , հատուածըս հոգեորական եղերերգութեանց նուագօք իրեւ զթատերացն ամենեին 'ի ժաման հանդիսից այլոց աշխարհական թատերաց երգեն գուսանք . ոչ ինչ 'ի հանդիսատեսացն պահանջեալ , այլ զի փոխանակ 'ի թատերսն ժողովելոյ 'անդր հաւաքեսցին : Հոր բազում օտարականք և քաղաքացիք զուարձանան և օգտին : Օայս ամենայն ասացաք առ 'ի յայտ կացու-

ցանել՝ զի եթէ կամ էր բարեպաշտել
մարդկանն, էր հնար վայելել ընդ
զուարձութեն և 'ի բարութիւնսն ...

Կարծեմ ըստ բաւականին արարաք
զպատասխանի յայսոսիկ բանս նաև
երկրորդի խնդրոյն : Իսկ 'ի պատաս-
խանի երրորդի հարցուածոյն յաւե-
լումք ասել և զայս, զի բանահիւսու-
թիւնդ այդ թատերական եթէ չէր
պատճառ վնասուց, յայնժամ մարթ-
էր և առ 'ի զուարձութիւն և թէ ա-
ռաջի առնել . բայց ո՞թուեսցէ զան-
թիւ վնասս հոգւոյ և մարմնոյ, տան
և քաղաքի և ազգի : . . . Օօգտու-
թիւնս թատերական հանդիսից հա-
մարեաց որպէս 'ի գիշերի մթութեան
զլոյս ճրագի . յայն խաւար մթութե-
պահուն զի՞նչքան զլոյս ճրագին օգ-
տութեամբ լի . և ո՞ր ինչքան զայն
բերկրական : Յայն աղջամուղջ խա-
ւարին՝ միայն 'ի լոյս ճրագի և ոչ այլ-
ազգ հնար է տեսանել զգեղեցիկ
փայլումն ականց, ոսկւոյ, կերպասուց,
զարդուց և զամենայն իսկ բնութեան
զբարեվայելութիւն, և վայելել 'ի
նոսին և գործել զամենայն զկարեռորս
մեր զգործս : Այնպէս զի նա միայն՝
լոյսն ճրագի, 'ի զարհուրանաց խա-
ւարին յորում անփախուստ այսրանդր
ծփիմք յերկիւղ և 'ի տագնապ՝ զի մի-
դարահոս 'ի վախս կորնչիցիմք անձնա-
մատն, և կամ ընդհարեալք հարուա-
ծիցիմք, լուսն այն ճրագի յանկարծ
բորբոքեալ փարեալ զմեօք՝ յափշտա-
կեալ հանէ զմեզ 'ի դատապարտութե-
յանլոյծ կապանաց խաւարին : Յայց
ո՞ր միտս ունիցի 'ի զուարթութենէ
մտացն յարձակիցի 'ի բոց անդր՝ յա-
մենայն 'ի բարութիւնս լուսոյն վայե-
լել ցանկացեալ : Այս զանմիտ թի-
թռամբ ծիծաղիմք, որ զուարթա-
ցեալ յանձն ընդ լոյսն որ զնա 'ի խա-
ւարէն արտաքս կորզեաց՝ ոչ շատ գրէ
զշափաւոր բերկրանս յոր կարէ վայե-
լել անվնաս, այլ յափշտակեալ ընդ-
գեղլուսոյն՝ դիմէ 'ի վերայ, և 'ի կի-
զողական ջերմութենէն յետս ընդ-
գէմ ընդոստուցեալ, կամի դարձեալ

'ի մօտոյ վայելել յառաւելութիւն
լուսոյն, հնարս հնարելով յանզգաս-
տից յանկարծօրէն 'ի վերայ հասա-
նել ճրագին, և առանց կիզելոյ կալ
'ի նմին . և սկսանի պարայածիլ զՃրա-
գաւն այնչափ, մինչև ամենեին ան-
կեալ 'ի մտաց և ընկղմեալ 'ի զմայ-
լումն, մատչի 'ի բոց անդր և տոչորի .
քանզի թէ և փորձով 'ի միտ առնու-
թէ առանց կիզելոյ անհնար է հուպ
մատչել 'ի բոցն, բայց այնուհետեւ
անհանդուրժելի նմա թուի հեռա-
ցեալ կալ և վայելել 'ի չափաւոր լոյս
նորա : Այս այս ամենայնիւ պատահէ
և մարդոյ անմտի . զի 'ի թատերսն
զաշխարհ ամենայն տեսանէ առաջի
իւր, ոչ ինչ 'ի գործոց մարդկան ծած-
կի յաշաց նորա . և մինչդեռ 'ի խա-
ւարի տգիտութեան կայր, և ոչ զան-
ձին զկիրս Ճանաչել կարէր, յանկարծ
'ի սկզբանէ աշխարհի և այսր գործք
և խորհուրդք մարդկան բանին առա-
ջի նորա . և այն ինչ յայս բերկրական
տեսարան վայելել կայ առաջի նորա,
նա մոռացեալ զամենայն՝ 'ի մին միայն
յանպատշաճն կիրս միտ եղեալ խան-
ձոտի, այրի և կորնչի 'ի դառն ցաւս :
Աւազ . . . Արդ և առանձինն զամե-
նայն զինասսն միանգամայն զայդոցիկ
աշխարհական թատերաց համառո-
տիւ առաջի արասցուք :

Ա . Ա նաս յայժմեան աշխարհա-
կան թատերաց այն՝ զի ամուսնական
դաշնաւորութիւք որք այնպէս վաեմք
և պատուեալք են, և լուելեայն ընդ
փորձ եղելոց արանց գործին յարեե-
լեան աղինս, նա և առ հեթանոսս
անգամ, յլուրոպա անկեալ են 'ի յոյժ
յանարգութիւն, որպէս յայտ է գի-
տակաց . . .

Բ . Չարիք, զի մատաղ մանկունք
ուսեալք 'ի լոյս և 'ի խօսից զամենայն
ազգս անառակութե վարուց խառն
ընդ օրինաւորին անզանազան, ապա-
կանին բարք նոցա . . .

Գ . Չարիք աստի յաձախեալք, ան-
հաւատարմութիւք ամուսնական կե-
նաց, և սանձարձակ և ապերասան գոլ

մննդոց մանկտւոյն . և որպիսի՛ մեծամեծ վնասք իցեն այսոքիկ՝ թողխորհեսցի իւրաքանչիւր ոք . զի մի աստիւն երկարեսցուք 'ի բանս 'ի վերայ յայտնեաց :

Դ . Չարիք աստի՛ արհամարհութիւն կրօնից , և աստուածագաշտութեան մերժումն : Եւ ոչ գիտէ զի պատճառ նախնական այսչափ ազգի ազգի աղանդոց և անկրօնութեանց և անհաւատութեանց են ախտքն այնոքիկ :

Ե . Առաջումն յառաջադիմութեամենայի , և մանաւանդ աստուածագաշտութեան . . . Այլ առ այս անշուշ բազումքը ընդդէմբանս արկցեն ասել 'եթէ հաւաստիք գործոցն զհակուակն վկայեն , զի ամենայն ազինք իւրոպիոյ 'ի զարգացումն գիտութեաց օր ըստ օրէ պայծառանան : — Արդարե այդ այդպէս է . օակայն զարգացումնդ այդ նուազ է յոյժ առ համեմատութեամբ գործեացն և դիւրութեանց՝ որովք հոծ և լի է իւրոպա : . . . Ինյայց յետ այսչափ ջանից , կարգաւորութեանց , գործեաց և հընարագիտութեանց առ 'ի զարգացուցանել զամենեսին յիմաստութեան , 'ի կրթել զնոսա 'ի ծանօթութիւն չշմարտութե , որպէս սակաւաթիւք են շահեալքն : Օինչ այլքն ամենեքին գործիցեն . թատերքդ այդոքիկ գողանան զուշ և զուրուշ ամենեցուն և յիմարեցուցանեն : Ծնօղք ամենեցուն նց առաքեն զնոտ 'ի համալսարանս մեծաւ ակնկալութ ուսանելոյ որդւոց իւրեանց , և ծախեն մտադիւր 'ի նոսա զլաստակս քրտանց իւրեանց . այլ նոքա յուլացեալք շրջին 'ի թատերս , վատնեն զդրամնն , և ոչ ինչ ուսեալք՝ յուսահատ մեկնին , և ոմանք անդէն իսկ մեռանին : Համաւօտ ասել . եթէ ոք մտադիւր ուշի ուշով մատք 'ի քննութիւն անցից որ անցանեն 'ի կողմանս իւրոպայ , տեսանէ յայտ յանդիման 'զի բազումքարեաց և անհնարին թշուառութեանց , աղքատութեանց , խռովութեանց , սպանու-

թեանց , անզաւակութեանց , ազգի ազգի անօրէնութեանց , անհաւատութեանց , և բազում յոյժ դատապարտութեանց հոգւոց մայր և սկզբնապատճառ կացեալէ թատրն աշխարհական :

Ո այս ամենայն ասացեալ 'ի զգուշութիւն մերազնեայ սիրելեաց , սկըսանիմք աւասիկ առաջի առնելնոցազօրինակս օգտակարացն թատերական բանահիւսութեանց , ցանկալով զի 'ի լաւն հաստատեսցին , 'ի վնասակարացն զգուշացեալք : Եւ է այս գլխաւորացն և իշխանաւորաց տեղեաց տեղեաց պարտք , զի միաձայն հաւանութեամբ դատապարտ արարեալ զվասակարան , ոչ յանձին կալցեն մուծանել յազգս մեր զսովորութիւն երեւլու կանանց 'ի թատեր , կամ պատանեաց 'ի հանդերձս կանացիս . և այսպէս բարեաց ազգին արդեաց և ապագայից պատճառք լինիցին , և մի վնասուց նոցա և դատապարտութեան : Անք զմերն զոր պարտն էր մեզ առնել արարաք . այսուհետեւ 'ի խոհականութիւն նոցին առնեմք յանձն , և մնամք ակնկալութեամբ մեծաւ լաւ զուղղադատ նոցին ընտրութիւն :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Հին և նոր պատիներու ու նագերու վրայ :

ՀԻՆ ատենը պսակը կամ թագը՝ միայն կուռքերու գլուխը կը դնէին հեթանոսները : Պլինիոս կ'ըսէ թէ առջի պսակ զնողը եղեր է Պիոնիսոս կամ Պաքոս՝ Հնդկաստանի տիրելէն ետքը . ուրիշը կ'ըսէ թէ երբոր Պրամազդ Հիտանեանց յաղթեց , ինքը դրաւ առջի պսակը : Խոտ կամ ծառ շմաց որ հեթանոսները անկէ պսակ չինեն իրենց կուռքերուն՝ կ'ըսէ Տերտուղիանոս . զոր օրինակ Առոնոսին պսակն էր թարմ թուզ ու խա-